

IV. ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՆԵՐԴՐՈՒՄ

2008թ. ընթացքում տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման ուղղությամբ աշխատանքներն իրականացվել են ՀՀ ՎՊԽ կողմից 2003թ. ընդունված «Միասնական տեղեկատվական վիճակագրական համակարգի զարգացման հայեցակարգ»-ին համապատասխան:

ՀՀ ԱՎԾ կորպորատիվ համակարգչային ցանցի կառուցմամբ պայմանավորված, առանձնացված ստորաբաժանումներում շարունակվել են տեղային համակարգչային ցանցերի արդիականացման աշխատանքները:

ՀՀ ԱՎԾ կառուցվածքային ստորաբաժանումների գործող տեղային ցանցը միավորել է տեխնիկական պահանջներին համապատասխանող 180 համակարգիչ, գործում է «ԷնԷսԷսԴ-ոմեն» դոմենային միջավայր, որը կառավարվում է «Վինդոու-2000» սերվերի միջոցով: Այն ապահովում է կենտրոնացված կառավարումով հուսալի միջավայր, ներառյալ հակավիրուսային պաշտպանությունը:

2008թ. ՀՀ ԱՎԾ կառուցվածքային ստորաբաժանումների համակարգչային սարքավորումների 8.0%-ն արդիականացվել է, նոր ստացված համակարգիչներում տեղակայվել են անհրաժեշտ ծրագրային փաթեթներ և միացվել համակարգչային տեղային ցանցին: 5 համակարգիչներ վերատեղակայվել են անհրաժեշտ ծրագրային փաթեթներով և տրամադրվել առանձնացված ստորաբաժանումներին:

Տեխնիկական աջակցություն ցուցաբերելու նպատակով 2008թ.-ին այցելություններ են կատարվել ՀՀ ԱՎԾ աշխատակազմի առանձնացված ստորաբաժանումներ, որտեղ մասնավորապես կատարվել են հետևյալ աշխատանքները. ՀՀ ԱՎԾ աշխատակազմի Գեղարքունիքի, Լոռու, Սյունիքի, Տավուշի և Վայոց ձորի մարզային գործակալություններում արդիականացվել են ծրագրային փաթեթները, թարմացվել են հակավիրուսային ծրագրերը, կարգավորվել է տեղային ցանցը և մոդեմային կապը համապատասխան գործակալությունների տարածքային ստորաբաժանումների, ինչպես նաև ՀՀ ԱՎԾ-ի հետ:

2008թ. աշխատանքներ են տարվել Wireless տեխնոլոգիայի ներդրման ուղղությամբ: Ծարունակվել է վիճակագրական և վարչական տվյալների արխիվացումը: Համակարգչային սարքավորումների անխափան աշխատանքն ապահովելու նպատակով կատարվել են ստուգումներ, ախտորոշումներ և սարքավորումների վերանորոգման աշխատանքներ:

ՀՀ ԱՎԾ-ում շահագործվել են թվով 68 տվյալների բազաներ: 2008թ. վիճակագրական տարբեր ոլորտների տվյալների մշակման համար ստեղծվել են 3 նոր ծրագրա-տեխնոլոգիական համալիրներ, իսկ 38 ծրագրա-տեխնոլոգիական համալիրներում կատարվել են 93 փոփոխություններ: ՀՀ ԱՎԾ առանձնացված ստորաբաժանումներում շահագործվել են 15 ծրագրա-տեխնոլոգիական համալիրներ և 68 կազմակերպություններում՝ 3-ը: Ամբողջ տեղեկատվությունը մուտքագրվել է տեղերում և ամփոփման նպատակով փոխանցվել ՀՀ ԱՎԾ:

Վիճակագրական աշխատանքներն արդիականացնելու նպատակով MS SQL Սերվերում (SQLNSSL) ստեղծվել են տվյալների բազաներ շինարարության, առևտրի և ծառայությունների ոլորտներում:

Շարունակվել է դասակարգիչների տվյալների հիմնապաշարի վարումը և ընդլայնումը: Օգտագործելով Արք Վիյու (ArcView 8) գրաֆիկական փաթեթը մշակվել են 22 քարտեզներ վիճակագրական հրապարակումներում զետեղելու նպատակով: Շարունակվել են տվյալների բազան տեղեկատվությամբ լրացնող և ժամանակագրական շարքերի ստացումը ապահովող ծրագրերի մշակման-նախագծման աշխատանքները:

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների աշխատակիցների համար կազմակերպվել են 3 սեմինարներ՝ «CorelDraw Graphics Suite X4 և PhotoShop CS3 փաթեթներով աշխատելու սկզբունքները», «Ծանոթացում Microsoft ֆիրմայի կողմից մշակված ծրագրային փաթեթին», «Տեղային համակարգչային ցանցում անվտանգ և ապահով աշխատելու համար» թեմաներով: